



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՐՄԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ»



Ա. ՄԻՆԱՅԱՆ

«10» 01 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 01

Ձեռնարկողը՝

«ՊոլիԱրմ» ՍՊԸ

Ք. Երևան, Վ. Մարգարյան 26/1

Գործունեությունը՝

Կապանի հարթակի տարածքում 2017-2020թթ  
երկրաբանահետախուզական աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

«Սյունիքի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Թիվ ԲՓ 01  
'10' 01 2018թ.

**<< ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հարթակի տարածքում 2017-2020թթ. երկրաբանահետախուզական աշխատանքների>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝ <<ՊոլիԱրմ>> ՍՊԸ  
Նախագծող՝ <<ՊոլիԱրմ>> ՍՊԸ  
Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ  
<Գ> կատեգորիա  
Տեղադրման վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզ

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքների նպատակը ՀՀ Սյունիքի մարզի Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջաձոր, Գեղանուշ, Գորիս (Բարձրավան և Շուռնուխ բնակավայրեր) Եղեգ, Կապան, Չորաստան, Ներքին խոտանան, Նորաշենիկ, Շրվենանց, Սևաբար, Վանեք, Վերին խոտանան, Տաթև (Քաշունի բնակավայր), Տանձավեր, Տավրուս և Օխտար համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ ընդհանուր 295.0կմ<sup>2</sup> մակերեսով, տարածքներում (այսուհետ՝ Կապանի հարթակ) 2017-2020թթ. ընթացքում ոսկու, արծաթի, պղնձի, կապարի և ցինկի հեռանկարային հանքայնացումներ հայտանաբերելու և գնահատելու նպատակով համալիր երկրաբանահետախուզական աշխատանքների կատարումն է:

Աշխատանքների բաժանումն ըստ տարիների նախատեսել է այնպես, որ յուրաքանչյուր տարում որոշակի ծավալի իրականացումից և արդյունքների ստացումից հետո ճշտվեն հաջորդ տարիներին կատարվելիք աշխատանքների ծավալները և տեսակները: Կապանի հարթակի հանքայնացման ներուժի գնահատման համար 2017-2020թթ. երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն փուլայնության պահպանմամբ:

Կապանի հարթակում նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքները հիմք են տվել Կապանի հարթակի տարածքում առանձնացնելու լոկալ հեռանկարային Անտառաշատ, Նորաշենիկ, Առաջաձոր, Կապան հյուսիս-արևմուտք, Աղբուլաղ և Չուրչուր տեղամասերը: Այդ տարածքներում կատարված ապրիլ աստիճանի ուսումնասիրությունների հիման վրա նախատեսվել են.

1. 2017-2018թթ. որոնողական աշխատանքները Աղբուլաղ և որոնողական հատման՝ Անտառաշատ և Նորաշենիկ տեղամասերում;
2. 2018-2019թթ. որոնողական աշխատանքները Չուրչուր և որոնողական հատման՝ Առաջաձոր և Կապանի հյուսիս-արևմուտք տեղամասերում:



3. 2019-2020թթ. Աշխատանքների շարունակման անհրաժեշտությունը կորոշվի 2017-2018թթ. և 2018-2019թթ. ստացված արդյունքներով:

Կապանի հարթակն ընդգրկող տարածքը հյուսիսում սահմանափակվում է Բարձրավան, արևելքում Արծվանիկ, հարավում Գեղանուշ գյուղերով և արևմուտքում՝ Կապան քաղաքի արևմտյան ծայրամասով:

Կապանի հարթակի ռելիեֆը տիպիկ լեռնային է, որի բացարձակ բարձրությունները տատանվում են 730մ (Կապան քաղաքի մատույցներում) մինչև 3249մ (Բաղաց սար լեռնագագաթ):

Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքային դաշտը բարձր լեռնային, խիստ կտրտված ռելիեֆի գոտի է, աչքի է ընկնում ջրբաժանների ու գետահովիտների բացարձակ բարձրությունների մեծ տատանումներով, որտեղ խիստ կտրատված ռելիեֆի շնորհիվ ինտրուզիվ ապարները հաճախ հանդես են գալիս ժայռային մերկացումներով: Տարածաշրջանի հիմնական լեռնագրական միավորները Զանգեզուրի լեռնաշղթայի ճյուղավորումներն են, հյուսիսից Բարգուշատի լեռները, արևմուտքից Մեղրու լեռները, կենտրոնական մասում՝ Խուստուփ-Կատարի լեռները:

Կապանի հարթակի տարածքը ընդգրկում է Ողջի գետի միջին հոսանքների, Որոտան գետի Աղավնաձոր և Քաշունի վտակների ջրհավաք ավազանները: Հանքային հարթակի հիմնական ջրագրական միավորը Ողջի գետն է միջին հոսանքում՝ Քաջարան-Կապան հատվածում, իր Վաչագան, Գեղանուշ, Աճանան, Գիրաթաղ, Գեղի (ստորին հոսանքը Սևքար վտակով) վտակների ջրհավաք ավազաններով:

Աղբուլաղ (51.5կմ<sup>2</sup>) տեղամասում 2017թ-ին երկրաբանական հետազոտությունների նպատակով կիրականացվեն հանքակտորային նմուշարկվամբ երկրաբանական երթուղիների անցում և ցրման երկրորդային պսակներով լիթոերկրաքիմիական նմուշների վերցնում: Տեղամասը դիտարկվում է որպես հեռանկարային ոսկի-բազմամետաղային հանքայնացման հայտնաբերման համար: Ըստ ծրագրի նախատեսվում է երկրաբանական երթուղիներ 50զծ.կմ, հանքակտորային նմուշարկում՝ 500 հատ, նմուշների վերցնում՝ 50 հատ: Երկրորդային ցրման պսակներով լիթոերկրաքիմիական նմուշարկում 200x200 ցանցով՝ 1350 հատ, իսկ 200x40 ցանցով՝ 1375 հատ:

Անտառաշատ (8կմ<sup>2</sup>) որոնողազնահատման տեղամասում առկա են գերազանցապես ոսկու և կապարի ոսկու հետ միասին ցրման երկրորդային պսակներով առանձնացված երկու անոմալիաներ: Երկու անոմալիաներն էլ ձգվում են հյուսիս-արևելյան ուղղությամբ: Խորհրդային ժամանակաշրջանում այս տեղամասում հորատված առանձին հորատանցքերում կտրվել են ոսկու մինչև 2գ/տ պարունակությամբ և մեկ մետր հզորությամբ առանձնացված հանքային հատույթներ: Ինչպես նաև այս տեղամասում նշվել է հյուսիս-արևմտյան ուղղությամբ տարածվող 1-1.5կմ ձգվածությամբ փոփոխված ապարների գծային պսակ: Արմատական ապարներից վերցված առանձին բեկորային նմուշներ ցույց են տվել ոսկու մինչև 0.5-4գ/տ, պղնձի մինչև 0.03-0.09%, ցինկի մինչև 0.02-0.05%, կապարի մինչև 0.005-0.02%, բիսմութի մինչև 4.6-10.4գ/տ, թելուրի մինչև 39.7գ/տ պարունակություններ:

Նախատեսվում է մակերևույթում հանքային մարմինների բացահայտման և տեղադրման ուսումնասիրման համար հետախուզաառուներով բացել լիթոքիմիական անոմալիաները: Հետախուզաառուներին պետք է նախորդի մակերևույթի երկրաբանական դիտարկումները, ինչի արդյունքում տեղանքում կձշտվեն հետախուզաառուների դիրքը: Ըստ ծրագրի՝ Անտառաշատ տեղամասում 2017թ. նախատեսվում է հետևյալ լեռնաանցման աշխատանքներ՝ ճանապարհների կառուցում - 2.5զծ.կմ, հետախուզաառուների անցում - 6000.0մ<sup>3</sup>, փաստագրում - 1500զծ.մ ակոսային նմուշների - 750 հատ, բեկորային նմուշների - 250 հատ:

Հանքային մարմինների առկայության հավաստման դեպքում ուսումնասիրությունների հաջորդ փուլերում կնախատեսվեն հորատանցքերի սյունակային հորատում, հնարավոր է նաև լրացուցիչ բացում մակերևույթային լեռնային փորվածքներով:

Նորաշենիկ (10կմ<sup>2</sup>) որոնողագնահատման տեղամասում նախատեսվում է մակերևույթում հետախուզաառումներով բացել լիթոերկրաքիմիական անոմալիաները: Հնարավորության դեպքում հետախուզաառումները կփոխարինվեն մաքրումներով, ինչը կէժանացնի աշխատանքների արժեքը: Լեռնային աշխատանքներին կնախորդեն մակերևույթային երկրաբանական դիտարկումները, ինչի արդյունքում տեղանքում կճշտվեն հետախուզաառումների դիրքը:

Նորաշենիկ տեղամասում 2017թ. Կիրականացվի լեռնաանցման հետևյալ աշխատանքները՝ ճանապարհների կառուցում - 0.5զծ.կմ, հետախուզաառումների անցում - 6600.0մ<sup>3</sup>, փաստագրում - 1650զծ.մ, ակոսային նմուշներ - 825 հատ, բեկորային նմուշներ - 340 հատ:

Ըստ ներկայացված հայտի՝ տարածքի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման, հայտնի հանքերակումների և հանքայնացման կետերի ճշտման, ինչպես նաև նախկինում հայտնի հանքերակումների և հանքայնացման կետերի հայտնաբերման համար կիրականացվի երկրաբանական երթուղիների անցում՝ ընդհանուր՝ 115զծ.կմ: Երկրաբանական երթուղիները ուղեկցվելու են բնական մերկացումների և էյուվիալ-դելյուվիալ մեծաբեկոր թափվածքների արմատական ապարներից՝ անալիզների կատարման համար, հանքակտորային նմուշների վերցմամբ (ընդամենը 1150 նմուշ), ինչպես նաև էտալոնային կոլեկցիայի և թափանցիկ հոկուկների ու հոկուկների պատրաստման համար՝ ընդամենը բեկորային 115 նմուշ: Անմիջապես դաշտային պայմաններում կատարվելու է նմուշների նախնական մշակում, ներառելով դրանց փաթեթավորումը ռեեստրների կազմումը, նմուշարկման գրքի վարումը: Բացի այդ իրականացվելու է ցրման հոսքերով լիթոերկրաքիմիական, երկրորդային պսակներով լիթոերկրաքիմիական նմուշարկում, երկրաֆիզիկական աշխատանքներ:

Հետախուզաառումների անցումը նախատեսվում է կատարել ինչպես ձեռքի աշխատանքով, այնպես էլ մեխանիկական եղանակով: Առումների խորությունը նախատեսվում է ընդունել մինչև 2.0մ, լայնությունը 0.8մ ձեռքի աշխատանքով կատարման դեպքում և մեխանիկական եղանակով իրականացնելիս 0.6-0.8մ:

Հետախուզական մակերևույթային փորվածքների /և ձեռքով և տեխնիկայի միջոցով/ անցման ժամանակ դատարկ ապարները և հողաշերտը կկուտակվեն փորվածքների տարբեր կողմերում՝ հետագայում հետլիցք և վերակուլտիվացիա կատարելու նպատակով: Նախատեսվող մակերևույթային լեռնային փորվածքների ընդհանուր ծավալը կկազմի 44200.0մ<sup>3</sup>: Փաստագրումից և նմուշարկումից հետո բոլոր փորվածքները ենթակա են վերալցման (խորության 80% չափով), բացառությամբ հանքայնացված մասերի: Վերալցման ընդհանուր ծավալը կկազմի՝ 35360.0մ<sup>3</sup>:

Հորատման աշխատանքները կատարվելու են պոտենցիալ հանքայնացված գոտիների հայտնաբերման, ըստ հզորության եզրագծման, խորքում հետապնդման համար:

Իրականացվող հորատումը պետք է համապատասխանի հետևյալ տեխնիկական պարամետրերին.

- հորատման տրամագիծը HQ հորատահանուկի ամբողջությամբ վերցնելով;
- հանքային գոտիներից հորատահանուկի նվազագույն թույլատրելի ելքը պետք է կազմի 95% ոչ պակաս, կողային ապարներում 90% ոչ պակաս;
- հորատանցքի թեքությունը 50-90°;
- շեղումը նախագծային ազիմուտից հորատանցքի փողի յուրաքանչյուր կետում պետք է կազմի 50-ից ոչ ավել;
- հորատանցքերի խորությունը 50մ-ից մինչև 300մ;
- յուրաքանչյուր հորատանցքի ճշգրիտ պարամետրերը որոշվում են երկրաբանատեխնիկական հանձնարարականով և տեղադրման ակտով;
- հորատանցքի վթարային վիճակի դեպքում թույլատրվում է կիրառել հորատման պահեստային տրամագիծը:



Հեռանկարային տեղամասերում նախատեսվում է ընդհանուր առմամբ հորատել 50-ից մինչև 300մ, միջինը 150մ խորությամբ 150 հորատանցք՝ ընդհանուրը 21750զծ.մ ծավալով: Հարթակը տեղադրվում է ապագա հորատանցքի տեղանշման տեղում: Հարթակի չափերը պետք է բավականացնի հորատող հաստոցի տեղադրման և տեխնիկային շրջադարձի համար: Ընդամենը նախատեսվում է նախապատրաստել 150 հորատման հարթակ: Մեկ հորատման հրապարակի մակերեսը կկազմի՝ 150մ<sup>2</sup>, Ընդհանուր մակերեսը կկազմի՝ 22500.0մ<sup>2</sup>:

Հորատանցքերի վերջնական տեղադիրքը կճշտվի մակերևութային լեռնային փորվածքների անցումից և հանքայնացված գոտիների և մարմինների տեղադրման էլեմենտները ճշգրտելուց հետո:

Օրագրով նախատեսված հիմնական աշխատանքներին գույրնթաց իրականացվելու է ռադիոակտիվության մակարդակի մոնիթորինգ:

Բոլոր լեռնային փորվածքները և հորատանցքերը ենթարկվելու են պրոֆիլացման և կարտաժի: Դիտարկման կետերի ֆիքսումը իրականացվելու է համաձայն գործող նորմերի առուններում՝ 2 կետ 1.0մ<sup>3</sup> վրա:

Ճանապարհների շինարարություն կիրականացվի միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ անհնար է տեխնիկայի և անձնակազմի մոտեցումը: Հորատման ժամանակ կօգտագործվեն նաև նախկինում կառուցված ճանապարհները՝ դրանք նորոգելով: Նախատեսվում է 8.0 կմ նոր ճանապարհների շինարարություն և 16.0կմ հին ճանապարհների վերանորոգում: Ընդամենը 24.0կմ ճանապարհ: Տեղամասերում կառուցվող ճանապարհների և հորատահարթակների աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի 23250.0մ<sup>3</sup>:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հետախուզաառուների, հետախուզահորերի և խրամների, հողային զանգվածների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման, շինարարական տեխնիկայի տեղաշարժման ժամանակ կառաջանան անօրգանական փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շարժիչների աշխատանքի արդյունքում կառաջանան դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, որոնք կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից: Բացառվում է ջրային ավազանի աղտոտումը:

Աշխատանքների իրականացման ժամանակ նախատեսված է բնապահպանական միջոցառումների իրականացում, մասնավորապես.

- օդային ավազանի պահպանումը վնասակար արտանետումներից՝ ջրցանման և աշխատանքներում սարքին մեքենասարքավորումների օգտագործմամբ,
- ջրային ավազանի պահպանումը կեղտոտումից՝ հորատման ժամանակ օգտագործվող ջրերը հատուկ կահավորված փոսորակներում հավաքմամբ և կրկին օգտագործմամբ, բացառելով ջրերի արտահոսքը,
- ժամանակավոր կույտերի վերին մասերում և գետակների երկայնքով նախատեսվում է կազմակերպել կյուվետներ և շրջանցող առուներ,
- երկրաբանական աշխատանքների ընթացքում չի նախատեսվում մակերևութային ջրերի հունի տեղափոխում,
- երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հորատման հարթակների, առուների շինարարություն կամ որևէ այլ հողային աշխատանքներ անմիջապես գետերի կամ այլ մակերևութային ջրային ռեսուրսների անմիջական մոտակայքում չեն կատարվելու,
- նախատեսվում է լանդշաֆտների վերականգնման աշխատանքներ՝ կատարելով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա;
- հողերի պահպանության կարգի պահանջների ապահովում;
- նախատեսվում է էկոհամակարգերի վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելում կամ մեղմացում,
- աշխատանքների հետևանքով բնությանը հասցված բացասական ազդեցությունների վերացում:

Հաշվի առնելով բնության հատուկ պահպանվող տարածքների հարևանությունը և անտառածածկ հատվածների առկայությունը նախնական գնահատման հայտում ներառվել են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

- յուրաքանչյուր նոր տեղամասում աշխատանքները սկսելուց առաջ իրականացվելու է մանրամասն ուսումնասիրություն, կենսաբազմազանության մասնագետների մասնակցությամբ, Կարմիր Գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակների առկայությունը պարզելու համար, իսկ հայտնաբերման դեպքում այդ տեղամասում բացառվելու են աշխատանքների իրականացումը:

- ԲՀՊՏ-ների տարածքների սահմանակից վայրերում բացառել փորման, հորատման և որևէ այլ հողային կամ շինարարական աշխատանքների իրականացում:

- անտառային հատվածներում բացառել նոր ճանապարհների կառուցումը:

անտառային հատվածներում որոնողական կամ նմուշառման աշխատանքները իրականացնել ՀՀ Անտառային օրենսգրքի 20-րդ հոլվածով սահմանված անտառային տնտեսության վարման հետ չկապված աշխատանքներ կատարելու կարգով պետական կառավարման լիազորված մարմնի տված համաձայնության հիման վրա: Նախատեսվող գործունեության շրջանակներում ծառահատումներ չեն նախատեսվում:

Ընկերությունը ՀՀ մշակույթի նախարարությունից ստացել է տեղեկատվություն Կապանի հարթակում գտնվող, ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հուշարձանների և դրանց պահպանական գոտիների կոորդինատների վերաբերյալ: Այդ տարածքներում՝ նախատեսվող գործունեության շրջանակներում, աշխատանքներ չեն կատարվելու: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հուշարձանների պետական ցուցակում չներառված որևէ հուշարձանի կամ մշակութային արժեքի հանդիպելու դեպքում, դրա անվթարությունն ու պահպանությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելու համար Ընկերությունը մշակել և ներդրել է «Պատահական գտածոյի պահպանության ընթացակարգ»:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզաառումների, հետախուզահորերի, հորատահարթակների և ճանապարհների կառուցման, ինչպես նաև վերականգնման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է ելնելով հետախուզաառումների, հետախուզահորերի տարածքի մակերեսից և հողաբուսաշերտի վերականգնման պայմանից: Նախատեսվում է իրականացնել տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա:

Որպես դաշտային աշխատանքների իրականացման տեղամասերը ընտրվելու են բուսականությունից զուրկ թեք լեռնային տարածքներ, շատ նոսր բուսականությամբ արոտավայր և խոտհարքներ: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կկազմի՝ 68600.0մ<sup>2</sup> կամ մոտ 6.9հա: Այդ թվում հետախուզաառումներ - 22 100.0մ<sup>2</sup>, ճանապարհներ - 24 000.0մ<sup>2</sup>, հորատման հարթակներ - 22 500.0մ<sup>2</sup>:

Իրականացվող աշխատանքներ ընթացքում հանվող հողային զանգվածի ընդհանուր ծավալը կկազմի՝ 67400.0մ<sup>3</sup>, այդ թվում բերրի հողինը՝ 8280.0մ<sup>3</sup>:

Կենսաբանական ռեկուլտիվացում կատարվելու է՝ տեխնիկական ռեկուլտիվացիայի ենթակա՝ 6.9հա, ամբողջ տարածքի միայն հարթակների և փորվածքների տեղամասում, ընդհանուր 4.46հա: Կենսաբանական ռեկուլտիվացման հաշվարկը իրականացվել է ըստ ոլորտում ընդունված գործակցի՝ 20.0հազ.դրամ մեկ հեկտարի համար: Այսպիսով ընդամենը ռեկուլտիվացման համար անհրաժեշտ ծախսերը կկազմեն՝ 10501.6հազ.դրամ, այդ թվում տեխնիկական ռեկուլտիվացիայի համար՝ 9609.6հազ.դրամ և կենսաբանական՝ 892.0հազ.դրամ:



Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքներին կկազմի՝ 17 250.0հազ.դրամ:

Ընկերության կողմից նախատեսվող գործունեության արդյունքում առաջացող ընդերքօգտագործման թափոնների կառավարման նպատակով հատուկ տարածք չի նախատեսվում, դրանք անմիջապես ենթակա են տեղափոխման Ընկերությանը պատկանող նյութական միջոցների պահեստ: Երկրաբանական աշխատանքների տեղամասերում թափոնների կուտակում կամ պահեստավորում չի նախատեսվում: Թափոնների տեղափոխման և կառավարման համար անհրաժեշտ ընդհանուր գումարը կկազմի 81.2հազ. դրամ:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, իրականացված հանրային քնարկումների արդյունքները, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Կապանի հարթակում նախատեսվող գործունեությունը նախատեսվում է կատարել երեք տարում՝ 2017-2020 թվականների ընթացքում: Աշխատանքների բաժանումը ըստ տարիների նախատեսվել է այնպես, որ յուրաքանչյուր տարում որոշակի ծավալի իրականացումից և դրական արդյունքների ստացումից հետո կճշտվեն հաջորդ տարիներին կատարվելիք մանրագնին աշխատանքների ծավալները և տեսակները: Հաշվի առնելով տարածքում նախկինում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքները՝ որպես հեռանկարային առանձնացվել են Անտառաշատ, Նորաշենիկ, Առաջաձոր, Կապան հյուսիս-արևմուտք, Աղբուլաղ և Չուրչուր տեղամասերը:

Կապանի մշակույթի կենտրոնում իրականացված հանրային քնարկումների ժամանակ նշվեց, որ նախնական գնահատման հայտով նախատեսվում է տարածքում իրականացնել միայն երկրաբանահետախուզական աշխատանքներ:

Նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը: Նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Միջոցառումների ժամանակացույցը համապատասխանեցնել աշխատանքների իրականացման ժամանակահատվածին:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի հոդված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ (մասնավորապես՝ սեփականաշնորհված, գյուղնշանակության, անտառային և այլն հողատարածքներում աշխատելու նպատակով):

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է իստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումներին, մոնիթորինգի և սոցալ-տնտեսական ծրագրին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

3. Որոնողահետախուզական աշխատանքների իրականացման արդյունքում տեղամասում առկա ջրային ավազանի վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառման նպատակով անհրաժեշտ է ուղղորդվել ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով, իսկ անտառային հողերում՝ ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի N 1045-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տեղամասին հարակից հատուկ պահպանվող, ինչպես նաև բնական և պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտիների տարածքներում բացառել ցանկացած աշխատանքների իրականացում:

5. Աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները:

6. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինարդի կուտակումն և հեռացումն (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Երկրաբանահետախուզական աշխատանքների, ինչպես նաև նախատեսված միջոցառումների ժամանակացույցը համապատասխանեցնել աշխատանքների իրականացման ժամանակահատվածին:

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<ՊոլիԱրմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Կապանի հարթակի տարածքում 2017-2020թթ. երկրաբանահետախուզական աշխատանքների>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Կ. Մովսիսյան